<<ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՀԻՄԱՆԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՏՈՒԳԱՉԱՓՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԾՁԲ- 2020/28-ԵՊԲՀ

ք.Երևան «___» _____ 20 թ.

<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամը, ի դեմս ռեկտոր **Ա. Ա. Մուրադյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից, և «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ա.Բաբայանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սոտւգաչափման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների։

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը։ Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը։

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին։

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ։

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 2118600 (երկու միլիոն հարյուր տասնութ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում

նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել

ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
<<Երևանի Միխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>	«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ
Հիմնադրամ	ք.Երևան, Կոմիտաս 49/4
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	հ/հ 1150012490810100
Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Տերյան մ/ճ	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Կիևյան մ/ճ
Հ/Հ 11500166513800	ՀՎՀՀ 00219641
ՀՎՀՀ 01503448	Տնօրենի պաշտոնակատար Ա.Բաբայան
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	
_____	---
(ստորագրությունը)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ.
Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078 Date: 2020.12.08 14:54:30 AMT	Digitally signed by MKRTCHYAN NAIRA 5809720447 Date: 2020.12.07 16:19:21 GMT+04:00

Հավելված N 1
« » 20 թ. կնքված
N ԳՀԾՁԲ- 2020/28-ԵՊԲՀ *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

	Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանում	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
							հասցեն	Ժամկետը**
1	71351460	Անալիզատորի ստոուգաչափում	Անալիզատորի ստոուգաչափում	հատ	396000	22	Պատվիրատուի կողմից նշված հասցեյով	Նախատեսվում է ձեռք բերել 2020 թվականին 20 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից
2	71351460	Կոագուլոմետրի ստոուգաչափում	Կոագուլոմետրի ստոուգաչափում	հատ	36000	2	Պատվիրատուի կողմից նշված հասցեյով	Նախատեսվում է ձեռք բերել 2020 թվականին 20 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից
3	71351460	ֆոտոէլեկտոկոլորիմետրի ստոուգաչափում	ֆոտոէլեկտոկոլորիմետրի ստոուգաչափում	հատ	18000	2	Պատվիրատուի կողմից նշված հասցեյով	Նախատեսվում է ձեռք բերել 2020 թվականին 20 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից
4	71351460	Ջերմակարգավորիչի (կյուվեզի)ստոուգաչափում	Ջերմակարգավորիչի (կյուվեզի)ստոուգաչափում	հատ	21600	6	Պատվիրատուի կողմից նշված հասցեյով	Նախատեսվում է ձեռք բերել 2020 թվականին 20 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու

								օրվանից
5	71351460	Ջերմակարգավորիչի (ռեանիմացիոն սեղանի)ստոուգաչափում	Ջերմակարգավորիչի (ռեանիմացիոն սեղանի)ստոուգաչափում	հատ	7200	2	Պատվիրատուի կողմից նշված հասցեյով	Նախատեսվում է ձեռք բերել 2020 թվականին 20 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից
6	71351460	Ջերմակարգավորիչի (թերմոստատի) ստոուգաչափում	Ջերմակարգավորիչի (թերմոստատի) ստոուգաչափում	հատ	36000	10	Պատվիրատուի կողմից նշված հասցեյով	Նախատեսվում է ձեռք բերել 2020 թվականին 20 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից
7	71351460	Ջերմակարգավորիչի (ջրային բաղնիք) ստոուգաչափում	Ջերմակարգավորիչի (ջրային բաղնիք) ստոուգաչափում	հատ	7200	2	Պատվիրատուի կողմից նշված հասցեյով	Նախատեսվում է ձեռք բերել 2020 թվականին 20 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից
8	71351460	Ջերմակարգավորիչի (չոր օդային ախտահանիչի) ստոուգաչափում	Ջերմակարգավորիչի (չոր օդային ախտահանիչի) ստոուգաչափում	հատ	111600	31	Պատվիրատուի կողմից նշված հասցեյով	Նախատեսվում է ձեռք բերել 2020 թվականին 20 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից
9	71351460	Պուլսօքսիմետր-կարդիոմոնիտորի ստոուգաչափում	Պուլսօքսիմետր-կարդիոմոնիտորի ստոուգաչափում	հատ	799200	74	Պատվիրատուի կողմից նշված հասցեյով	Նախատեսվում է ձեռք բերել 2020 թվականին 20 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից
10	71351460	ԷՍԳ-ի (էլեկտրասրտագրիչ) ստոուգաչափում	ԷՍԳ-ի (էլեկտրասրտագրիչ) ստոուգաչափում	հատ	162000	15	Պատվիրատուի կողմից նշված հասցեյով	Նախատեսվում է ձեռք բերել 2020 թվականին 20 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից
11	71351460	Պուլսօքսիմետրի ստոուգաչափում	Պուլսօքսիմետրի ստոուգաչ	հատ	54000	5	Պատվիրատուի կողմից նշված	Նախատեսվում է ձեռք բերել 2020

			փում				հասցեյով	թվականին 20 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից
12	71351460	Ուրինոմետրի ստոուգաչփում	Ուրինոմետրի ստոուգաչ փում	հատ	9000	1	Պատվիրատուի կողմից նշված հասցեյով	Նախատեսվում է ձեռք բերել 2020 թվականին 20 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից
13	71351460	Էլեկտրամիոգրաֆի ստոուգաչփում	Էլեկտրամիոգրաֆի ստոուգաչ փում	հատ	14400	1	Պատվիրատուի կողմից նշված հասցեյով	Նախատեսվում է ձեռք բերել 2020 թվականին 20 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից
14	71351460	Էլեկտրաէնցեֆալոգրաֆի ստոուգաչփում	Էլեկտրաէնցեֆալոգրաֆի ստոուգաչ փում	հատ	28800	2	Պատվիրատուի կողմից նշված հասցեյով	Նախատեսվում է ձեռք բերել 2020 թվականին 20 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից
15	71351460	Շաքարաչափի (գլյուկոմետրի) ստոուգաչփում	Շաքարաչ ափի (գլյուկոմե տրի) ստոուգաչ փում	հատ	54000	6	Պատվիրատուի կողմից նշված հասցեյով	Նախատեսվում է ձեռք բերել 2020 թվականին 20 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից
16	71351460	Կշեռք բժշկականի (տեխնիկական) ստոուգաչփում	Կշեռք բժշկական ի (տեխնիկա կան) ստոուգաչ փում	հատ	61200	17	Պատվիրատուի կողմից նշված հասցեյով	Նախատեսվում է ձեռք բերել 2020 թվականին 20 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից
17	71351460	Կշեռք մանկականի (տեխնիկական) ստոուգաչփում	Կշեռք մանկական ի (տեխնիկա կան)ստոու գաչփում	հատ	82800	23	Պատվիրատուի կողմից նշված հասցեյով	Նախատեսվում է ձեռք բերել 2020 թվականին 20 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիր

								ը կնքելու օրվանից
18	71351460	Կշեռքի (էլեկտրոնային) ստուգաչափում	Կշեռքի (էլեկտրոնային) ստուգաչափում	հատ	24000	2	Պատվիրատուի կողմից նշված հասցեյով	Նախատեսվում է ձեռք բերել 2020 թվականին 20 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից
19	71351460	Ջերմաչափի ստուգաչափում	Ջերմաչափի ստուգաչափում	հատ	14400	4	Պատվիրատուի կողմից նշված հասցեյով	Նախատեսվում է ձեռք բերել 2020 թվականին 20 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից
20	71351460	Մանոմետրի ստուգաչափում	Մանոմետրի ստուգաչափում	հատ	25200	21	Պատվիրատուի կողմից նշված հասցեյով	Նախատեսվում է ձեռք բերել 2020 թվականին 20 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից
21	71351460	Տոնոմետրի ստուգաչափում	Տոնոմետրի ստուգաչափում	հատ	63600	53	Պատվիրատուի կողմից նշված հասցեյով	Նախատեսվում է ձեռք բերել 2020 թվականին 20 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից
22	71351460	Սպրեկտրաֆետոմետրի ստուգաչափում	Սպրեկտրաֆետոմետրի ստուգաչափում	հատ	54000	3	Պատվիրատուի կողմից նշված հասցեյով	Նախատեսվում է ձեռք բերել 2020 թվականին 20 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից
23	71351460	Կշեռքի (անալիտիկ) ստուգաչափում	Կշեռքի (անալիտիկ) ստուգաչափում	հատ	19200	2	Պատվիրատուի կողմից նշված հասցեյով	Նախատեսվում է ձեռք բերել 2020 թվականին 20 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիրը կնքելու օրվանից
24	71351460	Կշեռքի (տեխնիկական) ստուգաչափում	Կշեռքի (տեխնիկական)	հատ	3600	1	Պատվիրատուի կողմից նշված	Նախատեսվում է ձեռք բերել 2020

			ստոուգաչ փում				հասցեյով	թվականին 20 աշխատանքա յին օրվա ընթացքում պայմանագիր ը կնքելու օրվանից
25	71351460	Կշեռքի (տորսիոն) ստոուգաչփում	Կշեռքի (տորսիոն) ստոուգաչ փում	հատ	5400	1	Պատվիրատ ուի կողմից նշված հասցեյով	Նախատեսվո ւմ է ձեռք բերել 2020 թվականին 20 աշխատանքա յին օրվա ընթացքում պայմանագիր ը կնքելու օրվանից
26	71351460	Իոնոմերի ստոուգաչփում	Իոնոմերի ստոուգաչ փում	հատ	10200	1	Պատվիրատ ուի կողմից նշված հասցեյով	Նախատեսվո ւմ է ձեռք բերել 2020 թվականին 20 աշխատանքա յին օրվա ընթացքում պայմանագիր ը կնքելու օրվանից

**Ծառայությունը մատուցելու արդյունքում՝ տրամադրվում է չափման սարքի դրոշմ և / կամ ստուգաչափման վկայական:*

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
<<Երևանի Միխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Տերյան մ/ճ
Հ/Հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

_____

(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.12.08 14:54:53 AMT

Կ Ա Տ Ա Ր Ող
«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ
ք.Երևան, Կոմիտաս 49/4
հ/հ 1150012490810100
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Կիևյան մ/ճ
ՀՎՀՀ 00219641
Տնօրենի պաշտոնակատար Ա.Բաբայան

(ստորագրություն)
Կ.Տ.

Digitally signed by MKRTCHYAN NAIRA 5809720447
Date: 2020.12.07 16:20:03 GMT+04:00

Հավելված N 2
« » 20 թ. կնքված
N ԳՀՄԶԲ- 2020/28-ԵՊԲՀ *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71351460	Անալիզատորի ստուգաչափում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	396000	396000
2	71351460	Կոագուլոմետրի ստուգաչափում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	36000	36000
3	71351460	ՖոտոԷլեկտոկոլորիմետրի ստուգաչափում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	18000	18000
4	71351460	Ջերմակարգավորիչի (կյուվեզի)ստուգաչափում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	21600	21600
5	71351460	Ջերմակարգավորիչի (ռեանիմացիոն սեղանի)ստուգաչափում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	7200	7200
6	71351460	Ջերմակարգավորիչի (թերմոստատի) ստուգաչափում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	36000	36000
7	71351460	Ջերմակարգավորիչի (ջրային բաղնիք) ստուգաչափում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	7200	7200
8	71351460	Ջերմակարգավորիչի (չոր օդային ախտահանիչի) ստուգաչափում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	111600	111600
9	71351460	Պուլսօքսիմետր-կարդիոմոնիտորի ստուգաչափում	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	799200	799200

10	71351460	ԷՍԳ-ի (էլեկտրասրտագրիչ) ստուգաչափում	'	'	'	'	'	'	'	'	'	'	'	162000	162000
11	71351460	Պուլսօքսիմետրի ստուգաչափում	'	'	'	'	'	'	'	'	'	'	'	54000	54000
12	71351460	Ուրինոմետրի ստուգաչափում	'	'	'	'	'	'	'	'	'	'	'	9000	9000
13	71351460	Էլեկտրամիոգրաֆի ստուգաչափում	'	'	'	'	'	'	'	'	'	'	'	14400	14400
14	71351460	Էլեկտրաէնցեֆալոգրաֆի ստուգաչափում	'	'	'	'	'	'	'	'	'	'	'	28800	28800
15	71351460	Շաքարաչափի (գլյուկոմետրի) ստուգաչափում	'	'	'	'	'	'	'	'	'	'	'	54000	54000
16	71351460	Կշեռք բժշկականի (տեխնիկական) ստուգաչափում	'	'	'	'	'	'	'	'	'	'	'	61200	61200
17	71351460	Կշեռք մանկականի (տեխնիկական)ստուգաչափում	'	'	'	'	'	'	'	'	'	'	'	82800	82800
18	71351460	Կշեռքի (էլետրոնային) ստուգաչափում	'	'	'	'	'	'	'	'	'	'	'	24000	24000
19	71351460	Ջերմաչափի ստուգաչափում	'	'	'	'	'	'	'	'	'	'	'	14400	14400
20	71351460	Մանոմետրի ստուգաչափում	'	'	'	'	'	'	'	'	'	'	'	25200	25200
21	71351460	Տոնոմետրի ստուգաչափում	'	'	'	'	'	'	'	'	'	'	'	63600	63600
22	71351460	Սպրեկտրաֆետոմետրի ստուգաչափում	'	'	'	'	'	'	'	'	'	'	'	54000	54000
23	71351460	Կշեռքի (անալիտիկ) ստուգաչափում	'	'	'	'	'	'	'	'	'	'	'	19200	19200
24	71351460	Կշեռքի (տեխնիկական) ստուգաչափում	'	'	'	'	'	'	'	'	'	'	'	3600	3600

25	71351460	Կշեռքի (տորսիոն) ստուգաչափում	'	'	'	'	'	'	'	'	'	'	'	5400	5400
26	71351460	Իոնոմերի ստուգաչափում	'	'	'	'	'	'	'	'	'	'	'	10200	10200

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով*

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
<<Երևանի Միհիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Տերյան մ/ճ
Հ/Հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

_____
(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.12.08 14:55:17 AMT

Կ Ա Տ Ա Ր Ող
«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ
ք.Երևան, Կոմիտաս 49/4
հ/հ 1150012490810100
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Կիևյան մ/ճ
ՀՎՀՀ 00219641
Տնօրենի պաշտոնակատար Ա.Բաբայան

(ստորագրություն)
Կ.Տ.

Digitally signed by MKRTCHYAN NAIRA 5809720447
Date: 2020.12.07 16:20:28 GMT+04:00

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
N ԳՀՇՁԲ- 2020/28-ԵՊԲՀ *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
« » 20 թ. կնքված
N ԳՀԾՁԲ- 2020/28-ԵՊԲՀ *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն